

Կարինե Զուրաբյան

Երևանի պետական համալսարան, տ.գ.թ. դոցենտ
kazurab@mail.ru

Ըաֆֆի Ալեքսանյան

Երևանի պետական համալսարան, Ֆինանսահաշվալի ամբիոնի
ասպիրանտ
raffialeksanyan@yahoo.com

**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ**

Հիմնաբառեր. կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, ոչ ֆինանսական հաշվետվողականություն, ինտեգրացված հաշվետվություն:

Ներկայումս ավելի ու ավելի լայն տարածում է ստանում այն գաղափարը, որ ընկերությունների գործունեության արդյունքները գնահատելիս անհրաժեշտ է հիմնվել ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական բնութագրիչների վրա: Ընկերությունների ամենատարածված ոչ ֆինանսական բնութագրիչներից մեկն է հանդիսանում կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն ասելով, որպես կանոն, հասկանում են ընկերության վերաբերմունքը և ռազմավարությունը շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև սոցիալական տարբեր հարցերի շուրջ: Ընկերությունը համարվում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն ունեցող, եթե այն գիտակցում է իր կողմից ծավալվող գործունեության ազդեցությունն իրեն շրջապատող միջավայրի վրա:

Գոյություն չունի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համընդհանուր սահմանում: Ըստ մի սահմանման՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ենթադրում է կազմակերպության ղեկավարության

պարտականությունը կայացնելու այնպիսի վճիռներ և իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք բարձրացնում են ընկերության բաժնետերերի բարեկեցության մակարդակը ու համապատասխանում են ինչպես հասարակության, այնպես էլ բուն ընկերության շահերին¹:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության միջոցով համագործակցություն է ստեղծվում ընկերության և հասարակության միջև: Ընկերությունը, որպես հասարակության կորպորատիվ քաղաքացի, ունի իրավունքներ և պարտականություններ: Ընկերության իրավունքները սահմանվում են հասարակության կողմից՝ օրենսդրական ակտերի միջոցով: Այս իրավունքները հիմնականում ընդգրկում են օրենքով չարգելված ցանկացած գործունեությամբ զբաղվելու իրավունքը, հասարակության մեջ գործելու իրավունքը և օրենքով պաշտպանված լինելու իրավունքը: Հասարակությունը թույլ է տալիս ընկերությանը օգտվել այդ իրավունքներից և ընդլայնել իր գործունեությունը:

Իրավունքների հետ մեկտեղ յուրաքանչյուր ընկերություն ունի նաև պարտականություններ հասարակության առջև՝ որպես հասարակության մեջ գործելու և վերջինիս կողմից տրամադրված իրավունքներից օգտվելու հետևանք: Հիմնական պարտականություններն ընդգրկում են օրենքի պահանջների կատարումը և հասարակության մեջ գործող վարվելակերպային նորմերին համապատասխանությունը:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում առանձնացնում են «կորպորատիվ քաղաքացի» հասկացությունը: Կորպորատիվ քաղաքացիությունը բիզնես ռազմավարության տեսակ է, որը սահմանում է ընկերության առաքելության հիմքում ընկած արժեքները, ինչպես նաև որոշում է ընկերության ղեկավարների և

¹ Daft Richard L., Management – 9th Edition, Vanderbilt University, Canada, 2010, p.138

աշխատակիցների կողմից կայացվելիք որոշումները հասարակության հետ շփվելիս: Ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը գլխավորապես արտահայտվում է ոչ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման փաստով:

Որպես կանոն, ընկերություններն իրենց տարեկան հաշվետվություններում ներառում են միայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներով (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջվող ֆինանսական հաշվետվությունները: Սակայն վերջին տարիներին ավելի մեծ տարածում է ստանում ոչ ֆինանսական բնույթի տեղեկատվության ներկայացումը ընկերությունների տարեկան հաշվետվություններում՝ ֆինանսական տեղեկատվության հետ միասին: Չնայած ֆինանսական տեղեկատվությունը շատ դեպքերում մնում է առանցքային տնտեսական տարաբնույթ որոշումներ կայացնելու հարցում, այնուամենայնիվ, ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործող տարբեր շահագրգիռ խմբեր հետաքրքրված են ոչ միայն ընկերության ֆինանսական արդյունքներով, այլև այլ ոլորտներում ընկերության գործունեության արդյունքներով: Թեև վերոնշյալ ոլորտներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա, ընկերության գործունեությամբ հետաքրքրված որոշ շահագրգիռ խմբեր առանձնահատուկ հետաքրքրություն են ցուցաբերում նշված ոլորտների նկատմամբ:

Ֆինանսական հաշվետվություններից բացի լրացուցիչ հաշվետվությունների և բացահայտումների ներկայացումն ապահովում է ընկերության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և ռազմավարության գնահատման թափանցիկությունը: Հենց այս թափանցիկությունն է մեծացնում շահագրգիռ տարբեր խմբերի վստահությունը

ընկերության կողմից հրապարակված տեղեկատվության և ընդհանրապես ընկերության նկատմամբ:

Գործնականում գոյություն ունեն ոչ ֆինանսական բնույթի տեղեկատվություն պարունակող հաշվետվությունների տարբեր տեսակներ: Վերոնշյալ հաշվետվությունների կազմում առաջինը «Ղեկավարության մեկնաբանություններ» կոչվող հաշվետվությունն է, որը, այլ ոչ ֆինանսական հաշվետվությունների նման, չի հանդիսանում ՖՀՄՄ-ներով պահանջվող պարտադիր հաշվետվություն: Այս հաշվետվության էությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է ընձեռում ընկերության տնօրեններին ներկայացնել տարբեր մեկնաբանություններ ՖՀՄՄ-ներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Հաշվետվության միջոցով ընկերության տնօրենները տրամադրում են մեկնաբանություններ և պարզաբանումներ ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վերաբերյալ: Տնօրենները հնարավորություն են ստանում բացահայտել ընկերության գործունեության նպատակներն ու այդ նպատակներին հասնելու ռազմավարությունը: Սա շատ արժեքավոր տեղեկատվություն կարող է հանդիսանալ ընկերության այնպիսի շահագրգիռ խմբերի համար, ինչպիսիք են առկա և պոտենցիալ ներդրողները, մատակարարները և վարկատուները:

Հաշվետվության հիմնական նպատակներն են՝

- ներկայացնել ղեկավարության կարծիքը ընկերության գործունեության արդյունքների և ֆինանսական վիճակի վերաբերյալ,

- լրացուցիչ տեղեկատվությամբ ամբողջականացնել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը,

- բացահայտել այն գլխավոր գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ընկերության ապագա գործունեության արդյունքների վրա:

Հետևաբար, «Ղեկավարության մեկնաբանություններ» հաշվետվությունը պետք է ներառի ապագային ուղղված տեղեկատվություն, որը կբավարարի Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներով սահմանված տեղեկատվության որակական բնութագրերին, այն է՝ տեղին լինելը, էականությունը, ճշմարիտ ներկայացումը, համադրելիությունը, հավաստիությունը, ժամանակին լինելը և հասկանալիությունը¹:

«Ղեկավարության մեկնաբանություններ» հաշվետվության հիմնական բաղադրիչները կախված են յուրաքանչյուր ընկերության առանձնահատկություններից, սակայն որպես հիմնական բաղադրիչներ պետք է ներառեն հետևյալ տարրերը՝

- բիզնեսի բնույթը,
- ղեկավարության նպատակները և ռազմավարությունը դրանց հասնելու ուղղությամբ,
- ընկերության ամենից նշանակալի ռեսուրսները, ռիսկերը և հարաբերությունները,
- գործունեության արդյունքները և հեռանկարները,
- ընկերության գործունեության առանցքային չափորոշիչները և ինդիկատորները, որոնք ղեկավարությունն օգտագործում է գնահատելու ընկերության գործունեության արդյունքները:

¹ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ

Հաջորդ ոչ ֆինանսական հաշվետվությունը կոչվում է «Բնապահպանական հաշվետվություն»: Այս հաշվետվությունն իրենից ներկայացնում է ընկերության տարեկան հաշվետվությունում ընդգրկված հաշվետվություն, որի հիմնական նպատակն է բացահայտել շրջակա միջավայրի վրա ընկերության գործունեության ազդեցության վերաբերյալ տեղեկատվություն:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը ողջունում է շրջակա միջավայրի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը ընկերության կողմից, եթե այն կաջակցի օգտագործողներին տնտեսական որոշումներ կայացնելու գործընթացում¹:

Այս հաշվետվությունը չի մտնում ՀՀՄՍ 1-ով² սահմանված ֆինանսական հաշվետվությունների ցանկում, ուստի ՖՀՄՍ-ներով սահմանված չէ որևէ պահանջ բնապահպանական հաշվետվությունների կազմի և կառուցվածքի վերաբերյալ:

Բնապահպանական հաշվետվության հիմնական բաղադրիչներն են՝

- ընկերության քաղաքականությունը շրջակա միջավայրի պահպանության կապակցությամբ,
- ընկերությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ կապված ռիսկերի կառավարման համակարգի առկայությունը,
- բնապահպանական օրենսդրության պահանջները և ընկերության կողմից կատարված քայլերն այդ պահանջների բավարարման ուղղությամբ,
- բնապահպանական օրենսդրության պահանջների խախտումների մանրամասները,

¹ Integrating Corporate Environmental Reporting & IFRS/IAS: Need of the hour, Neeraj Goyal, International Journal of Management and Social Sciences Research, Volume 2, No. 3, March 2013

² ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»

- բնապահպանական հարցերի հետ կապված դատական գործընթացները, որոնց մեջ ներգրավված է նաև ընկերությունը,

- հիմնական ցուցանիշները, որոնք օգտագործվում են ընկերության կողմից որոշելու ընկերության գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա,

- ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բնապահպանական ծախսերի, բնապահպանական պահուստների և պայմանական պարտավորությունների հաշվառման կապակցությամբ,

- հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ճանաչված բնապահպանական ծախսերը, որոնք կատարվել են ընկերության գործունեության բացասական հետևանքները վերացնելու համար,

- հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման համար նշանակված տուգանքների և տույժերի վերաբերյալ մանրամասները¹:

Ոչ ֆինանսական հաշվետվությունների շարքում հաջորդը «Սոցիալական հաշվետվությունն» է, որի միջոցով ընկերությունը ներկայացնում է իր տնտեսական գործունեության ազդեցությունը սոցիալական միջավայրի վրա: Ընկերությունները գործում են և գործունեություն են ծավալում հասարակության մեջ, ուստի իրենց անմիջական ազդեցությունն են ունենում շրջապատող սոցիալական միջավայրի վրա: Եթե ընկերությունը գիտակցում է իր պատասխանատվությունը շրջապատող սոցիալական միջավայրի հանդեպ, ապա նրա ղեկավարությունը պետք է հաշվի նստի մի շարք շահագրգիռ խմբերի պահանջների հետ և ապահովի հետևյալը՝

¹ Environmental Accounting and Reporting, ACCA, 2015, <http://www.accaglobal.com/gb/en/student/exam-support-resources/professional-exams-study-resources/p1/technical-articles.html>

- արդար վարձատրություն և բարենպաստ աշխատանքային պայմաններ,

- ժամանակին վճարումների կատարում մատակարարներին,

- նվազագույն վնաս շրջակա միջավայրին և այլն:

Կան տարբեր պատճառներ, թե ինչու են ընկերությունները հրապարակում սոցիալական հաշվետվություններ.

- որոշ ընկերություններ իրենց հեղինակությունը և բիզնեսը կառուցում են սոցիալական պատասխանատվության գաղափարի շուրջ, որպեսզի կարողանան գրավել սպառողների մեծ խմբեր,

- որոշ ընկերություններ կարող է զգան պատասխանատվություն հասարակության հանդեպ ապացուցելու, որ իրենք չեն շահագործում իրենց աշխատակիցներին,

- հնարավոր է, որ ընկերությունը գիտակցում է նման քայլերով երկարաժամկետ կայուն առաջընթացի ապահովման հնարավորությունը և այլն:

Ոչ ֆինանսական հաշվետվությունների շարքում հաջորդը «Կայունության հաշվետվությունն» է: Այս համատեքստում կայունությունը բիզնեսի կազմակերպման այնպիսի գործընթաց է, որը թույլ է տալիս ընկերությանը հասնել իր ներկա նպատակներին՝ առանց սահմանափակելու ապագա սերունդների հնարավորությունները հասնելու իրենց նպատակներին:

Կայունության հաշվետվությունը ընկերության կողմից հրապարակվող հաշվետվություն է, որն արտահայտում է ընկերության գործունեության ազդեցությունը տնտեսական, բնապահպանական և սոցիալական միջավայրերի վրա: Հաշվետվությունը կարող է ներառվել տարեկան հաշվետվությունների կազմում կամ հրապարակվել որպես առանձին հաշվետվություն: Նման հաշվետվությունների տարածվածության աճը վկայում է, որ ավելի շատ ընկերություններ

են ներկայումս գիտակցում իրենց պատասխանատվությունը և փորձում լինել թափանցիկ շրջակա միջավայրի վրա ընկերության գործունեության ազդեցության վերաբերյալ:

ՖՀՄՄ-ներով սահմանված չէ որևէ պահանջ Կայունության հաշվետվության կազմի և կառուցվածքի վերաբերյալ, ինչն, իր հերթին, առաջ է բերում հետևյալ խնդիրները.

- քանի որ հաշվետվության հրապարակումը մեծապես կամավոր է, ոչ բոլոր ընկերություններն են հրապարակում այն: Այն ընկերությունները, որոնք հրապարակում են նման տեղեկատվություն, ստիպված են ապացուցել, որ իրենք ունեն սոցիալական պատասխանատվություն կամ իրենց հեղինակությունը կառուցել են այդ պատասխանատվության վրա,

- հրապարակվող տեղեկատվությունը կարող է լինել ոչ ամբողջական: Շատ ընկերություններ ներկայացնում են միայն դրական տեղեկատվությունը,

- հաշվետվությունը կարող է հետևողականորեն չհրապարակվել,

- որոշ ընկերություններ՝ հատկապես փոքր և միջին ընկերությունները, ընդունում են, որ լրացուցիչ տեղեկատվության պատրաստման և շրջանառության մեջ դրման ծախսերը գերազանցում են դրանից ստացվող օգուտները:

Հարկ է նշել, որ Կայունության հաշվետվության գլխավոր առավելությունն այն է, որ դրա հրապարակումը վկայում է ընկերությունում ապագա կայուն աճին ուղղված ռազմավարության առկայության մասին:

Ոչ ֆինանսական հաշվետվությունների կազմում իր առանցքային դերն ունեն Ինտեգրացված հաշվետվությունները: Վերջիններս արդեն ավանդական են դարձել այն ընկերությունների համար, որոնցում ֆինանսական տեղեկատվությունը լրացվում է նաև գործունեության չափման այլ

ցուցիչներով, որոնք կարտահայտեն ընկերության գործունեության արդյունավետությունը կորպորատիվ և սոցիալական պատասխանատվությանն առնչվող տարբեր նպատակներին հասնելու կապակցությամբ: Ինտեգրացված հաշվետվությունը ցույց է տալիս, թե ինչպես են կազմակերպության ռազմավարությունը, կառավարումը, կատարողականը և հեռանկարները հանգեցնում արժեքի ստեղծմանը: Ինտեգրացված հաշվետվության գլխավոր նպատակն է բացատրել ֆինանսական կապիտալի մատակարարներին, թե ինչպես է կազմակերպությունը ժամանակի ընթացքում ստեղծում արժեք: Ինտեգրացված հաշվետվության միջոցով արժեք ստեղծելու ընկերության ունակության մեջ վստահություն են ձեռք բերում շահագրգիռ այնպիսի խմբեր, ինչպիսիք են՝ աշխատողները, սպառողները, մատակարարները, համայնքները, օրենսդրական մարմինները, կարգավորիչ մարմինները և այլն:

Իհարկե, Ինտեգրացված հաշվետվությունների կիրառումը կապված է մեթոդաբանական և պրակտիկ մի շարք հիմնահարցերի հետ: Միաժամանակ դեռևս չի ձևավորվել այն միասնական մարմինը, որը պատասխանատու կլինի հաշվետվության բովանդակության, կառուցվածքի և այլ պահանջների սահմանման և վերահսկողության համար: Իսկ այդ միասնականության բացակայության պայմաններում էապես նվազում է այն արժեքը, որն ապահովում են ինտեգրացված հաշվետվությունները: Ուստի խիստ կարևոր է, առաջին հերթին, ձևավորել մի մարմին, որի հիմնական գործառույթը կլինի համախմբել տարբեր երկրների մասնագիտական կառույցները ինտեգրացված հաշվետվողականության ներդրման գործընթացի շուրջ:

Հետագայում միայն հնարավոր կլինի մշակել և ընդունել միջազգային ստանդարտներ, որոնք կկարգավորեն ինտեգրացված հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հետ կապված հարցերը, ինչը թույլ կտա ձևավորել

հիմք՝ տարբեր երկրներում միասնական սկզբունքների հիման վրա հաշվետվություններ պատրաստելու և միևնույն ոլորտի ընկերությունների հաշվետվությունների միջև համադրելիություն ապահովելու համար:

ՀՀ-ում դեռևս չկա Ինտեգրացված հաշվետվությունների առնչությամբ որևէ մասնագիտական քննարկում: Ավելին, գրականության մեջ նույնպես բացակայում է որևէ հիշատակում նման հաշվետվողականության առկայության վերաբերյալ, ինչը մեծապես դժվարեցնում է նման հաշվետվությունների ներդրման աշխատանքները: Մակայն այդ հաշվետվողականությունը չափազանց կարևոր է մեր նման փոքր երկրների համար, քանի որ ներկայումս խոշոր ներդրողների մեծամասնությունը ներդրումային որոշումներ կայացնելիս առաջին հերթին հիմնվում է ոչ ֆինանսական բնույթ պարունակող հաշվետվությունների վրա, մասնավորապես ինտեգրացված հաշվետվությունների, քանի որ դրանում պարունակվող տեղեկատվությամբ է մեծապես հնարավոր գնահատել ընկերության պոտենցիալը և աճի հեռանկարները:

Ուստի զարգացող երկրների համար սա շատ մեծ հնարավորություն է ներգրավելու օտարերկյա ներդրումներ և զարգացնելու ազգային տնտեսությունը: Իսկ դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է իրազեկել գործարարներին նման հաշվետվողականության գոյության վերաբերյալ և ձեռնամուխ լինել միասնական միջազգային մարմնի ձևավորման գործընթացին՝ հաշվետվողականության ներդրման անհրաժեշտ մասնագիտական ընդհանուր հիմք ունենալու նպատակով:

ԱՍՓՈՓՈՒՄ

Ոչ ֆինանսական հաշվետվողականությունը չափազանց կարևոր է ՀՀ նման փոքր երկրների համար, քանի որ ներկայումս խոշոր ներդրողների մեծամասնությունը ներդրու-

մային որոշումներ կայացնելիս առաջին հերթին հիմնվում է ոչ ֆինանսական բնույթ պարունակող հաշվետվությունների վրա, քանզի դրանում պարունակվող տեղեկատվությամբ է մեծապես հնարավոր գնահատել ընկերության պոտենցիալը և աճի հեռանկարները:

Карине Зурабян

доцент ЕГУ, к.э.н.

kazurab@mail.ru

Раффи Александриян

аспирант ЕГУ

raffialeksanyan@yahoo.com

НЕФИНАНСОВАЯ ОТЧЕТНОСТЬ КАК ТИП КОРПОРАТИВНОЙ ОТЧЕТНОСТИ

Ключевые слова: корпоративная социальная ответственность, нефинансовая отчетность, интегрированная отчетность.

В настоящее время идея оценки результатов компании на основе не только финансовых, но и нефинансовых характеристик становится все более популярной. Одной из основных нефинансовых характеристик компании является корпоративная социальная ответственность.

В качестве доказательства того, что компания имеет корпоративную социальную ответственность, может рассматриваться предоставление нефинансовых отчетов, которые включают нефинансовую информацию для оценки результатов деятельности компании. Ключевую роль среди этих отчетов играют Интегрированные отчеты, основная цель которых показать, как компания в течение времени создает стоимость.

Нефинансовая отчетность очень важна для таких небольших стран, как Республика Армения, так как в настоящее время многие крупные инвесторы при принятии инвестиционных решений основываются на нефинансовой отчетности, поскольку информация, содержащаяся в ней, может быть использована для оценки потенциала и перспектив роста компании.

Karine Zurabyan

YSU, Assistant professor, PhD in Economics
kazurab@mail.ru

Raffi Aleksanyan

YSU, Post Graduate Student
raffialeksanyan@yahoo.com

NON – FINANCIAL REPORTING AS A TYPE OF CORPORATE REPORTING

Key words: corporate social responsibility, non-financial reporting, integrated reports.

Currently the idea of evaluating the results of the company based on not only financial but also non-financial characteristics is getting more and more popular. One of the main non-financial characteristics of the company is corporate social responsibility.

As a proof that company has corporate social responsibility can be considered presentation of non-financial reports, which include non-financial information for evaluation of the results of the company. Integrated reports play a key role among these reports. The main purpose of integrated reports is to present how the company creates a value.

Non-financial reporting is very important for small countries like RA, as nowadays many investors base on non-financial reports, as information included in it can be used to evaluate the potential and perspectives of growth of the company.